ման պատմութիւնը, Բաֆֆու հերոսի՝ Խենթի մասին պատմուող աւանդութիւններ:

Այդ գրառումներում զգացւում է նաեւ հեղինակի տագնապն ու ցաւը: Սիրտը ցաւում է 8 անգամ աւերուած ուրարտական բերդի համար[35], մանաւանդ՝ Բայազետի սքանչելի շինութեան՝ «Արեւելեան դեղեցկուհի» բերդի Աւետիս անունով ճարտարապետի համար, որի թեւը կտրել էին, հէնց որ սքանչելի շինութիւնը վեր էր խոյացել, այն գնդակների ու ռումբերի հետքերի համար, որոնք տեսնում էր շինութեան վրայ եւ բերդի հետ կապուած աղետալի պատմութիւնների համար (8, 361): Ի դէպ, ըստ Էփրիկեանի՝ բերդը կառուցուել է ԺԸ. դ. վերջին Մահմուդ փաշայի հրամանով եւ «մի հայ ճարտարապետի ձեռքով»[36]: Թումանեանը չի նշում անունը եւ ճակատագիրը հայ արուեստագէտի: Մի ժամանակ այդ պալատը համարուել է Թուրքական կայսրութեան ամենանշանաւոր պալատներից մէկը: Նրա դահլիճները մարմարից էին՝ զարդարուած բազմաթիւ սիւներով եւ արեւելեան ոճի կենդանագրերով: Թումանեանը տեսնում է, որ բացի մզկիթի մինարէից, մնացած շինութիւնները աւերակ էին:

Օրագրում Թումանեանը մէկ առ մէկ յիշատակում է հայոց գեղեցկութիւնները խեղող, հայ մշակոյթի վրայ ձեռք բարձրացնող բարբարոսների եւ այլ պատմական անձերի անուններ, ովքեր անցել են այդ վայրերով, եւ միայն մի դարի ընթացքում 8 անգամ աւերել են ուրարտական շրջանից մնացած բերդը՝ «Զաչան օղլի, Թամուր փաշայ, Վանայ Թամուր աղէն - Մակուայ Նադիր շահը, Պասկեւիչը, Բեբուտովը, 1877-ին՝ Տէր-Ղուկասով, 1914-ին էլ եւ այլն» (8, 363):

Կային նաեւ գրառումներ, որոնցից յետագայում կարող էին ծնուել նոր գեղարուեստական գործեր, կարող էին դառնալ վաւերագրական նիւթ, փաստարկ գրողի հրապարակախօսական յօդուածներում կամ պատմագիտական աշխատութիւններում:

1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Թումանեանն առաջին անգամ տեսաւ Արեւմտեան Հայաստանը, նրա բնաշխարհը, աւերուած երկիրը, տեսաւ «հալածական» ժողովուրդ: Նա տեսաւ մարդկային երեւակայութեան բոլոր սահմաններն անցնող վայրագութիւնների հետքերը, վերստին ու աւելի մեծ ուժով հիասթափուեց մարդ արարածից, քանի որ անձամբ դէմ առ դէմ հանդիպեց մարդ գազանին: Թումանեանը սեփական աչքերի բաղադրութեամբ, հոգու եւ սրտի իւրաքանչիւր թրթիռով զգաց արեւմտահայի ու ողջ ազգի տառապանքն ու ցաւը, փորձեց իր ուժերի ներածին չափով դարմանել այդ ցաւը եւ սպառուեց լոյս տալով.

Քանի՛ ձեռքից եմ վառուել.
Վառուել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լոյս տրուել,
Լոյս տալով եմ ըսպառուել:

35 Բայազետի հինաւուրց բերդի մասին գերմանացի ճանապարհորդ Վագները գրել է. «Ցանդուգն եւ հրաշակերտ մի շինուածք է՝ այնպիսի տեղերի վրայ հաստատուած, որ բազէներն ու անգղները հազիւ թէ կը համարձակուեն բուն դնելու» (*Հայագիտական հետազօտութիւնների մատենաշար*, **Թ. Խ. Ցակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Ց. Խ. Բարսեղեան**, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1, Երեւան, 1986, էջ 584):

36 Նոյն տեղում, էջ 584):

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԶԱԿԱՆ ՄԻ ՊԱՇՏՕՆԻ ՇՈՒՐՋ

Յովհաննէս Խորիկեան

Անտիկ հեղինակներն Աքեմենեան տէրութեան գոյութեան ողջ ընթացքում՝ Ք. ա. Զ.-Դ. դարերում, յիշատակում են վարչաշխարհագրական բառակապակցութիւններ, որոնց տեղադրութիւնը եւ դրանք կառավարող պետական բարձրաստիճան պաշտօնեաների՝ պարսից արքունիքում զբաղեցրած դիրքն առ այսօր յստակ պարզաբանում չի ստացել: Ստորեւ կը քննենք հին հեղինակների՝ խնդրոյ առարկայի մասին բոլոր տեղեկութիւնները՝ անհրաժեշտութեան դէպքում համադրելով Աքեմենեան սեպագիր արձանագրութիւններում յիշատակուող աշխարհագրական բառակապակցութիւնների հետ[1]: Այսպէս, Հերոդոտոսը յայտնում է, որ Դարեհ Ա-ն Օտանէսին նշանակել էր առափնեայ (շրջանի - Յ. Խ.) զօրքերի ստրատեգոս՝ հրամանատար[2], այսինքն՝ Օտանէսի ձեռքում կենտրոնացուած էր միայն ռազմական իշխանութիւնը: Հերոդոտոսը միաժամանակ գրում է, որ Դարեհ Ա-ի եղբայր Հիւստասպէսի որդի Արտափրենէսը Ասիայի առափնեայ բոլոր ժողովուրդների կառավարիչն էր, ունէր մեծ զօրք եւ շատ նաւեր[3]: Քսերքսէսի ժամանակ Ասիայի առափնեայ զօրքերի ստրատեգոսը Հիւդառնէսն էր[4], ինչը նշանակում է, որ Հիւդառնէսը վարչական կառավարման լիազօրութիւններ չի ունեցել: Ստացւում է, որ ժամանակ առ ժամանակ ռազմական եւ վարչական իշխանութիւնները կա՛մ բաժանուած են եղել մի քանի հոգու միջեւ, կա՛մ էլ միաւորուած՝ մէկ հոգու ձեռքում:

Դիոդորոս Սիկիլիացին Կիւրոս Մեծի ժամանակ Հարպագոսին յիշատակում է որպէս ծովի ստրատեգոս[5], այսինքն՝ խօսքը վերաբերում է առափնեայ ժողովուրդների հրամանատարին կամ էլ առափնեայ շրջաններում գտնուող նաւատորմի հրամանատարին: Դիոդորոս Սիկիլիացին Կիւրոս Կրտսերին անուանում է ծովի մօտ գտնուող սատրապութիւնների կառավարիչ (հեգեմոն)[6]: Պլուտարքոսը Կիւրոս Կրտսերին յիշատակում է Լիւդիայի սատրապ եւ առափնեայ նահանգների ստրատեգոս[7]: Մէկ այլ տեղեկութիւնում Դիոդորոս Սիկիլիացին եւ Քսենոփոնն այդ պաշտօնում (ծովափի կառավարիչ) յիշատակում են ստրատեգոս Ստրուտոսին[8]: Դիոդորոս Սիկիլիացին նշում է, որ այդ պաշտօնին յաւակնում էր նաեւ ստրատեգոս Օրոնտէսը[9], իսկ Մենտորը նշանակւում է Ասիայի մերձափնեայ շրջանների գլխաւոր

1 Այդ բառակապակցութիւններն արդէն քննարկել ենք մեր մէկ այլ աշխատութեան մէջ: Տե՛ս **Յ. Խորիկեան**, *Աքեմենեան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ*, Երեւան, 2010, էջ 35-39:

2 **Herodotus**, with an English translation by A. D. Godley, Vol. III, Books V-VII, Cambridge-Massachusetts-London, 1938, Loeb Classical Library, V, 25, p. 26.

3 Նոյն տեղում, V, 30, էջ 30:

4 Նոյն տեղում, VII, 135, էջ 436

5 **Diodorus of Sicily**, with an English translation by C. H. Oldfather, Vol. IV, Books IX-XII, Cambridge-Massachusetts-London, 1956, IX, 35, 1, p. 46.

6 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars II, Lipsiae, 1829, XIV, 19, 25; 26, 80, pp. 825, 834.

7 *Plutarch's Lives*, with an English translation by B. Perrin, Vol. XI, Cambridge-Massachusetts-London, 1954, Loeb Classical Library, Artaxerxes, II, 3, p. 130.

8 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars II, XIV, 99, 45, p. 904; **Ксенофонт**, *Анабасис*,- Греческая история, пер. С. Лурье, Москва, 2010, IV, 8, 17, с. 367.

9 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. II, Lipsiae, 1826, XV, 91, 5, p. 500.

© National Library of Armenia

հրամանատար[10]: Մենտորը մէկ այլ տեղեկութիւնում յիշատակւում է ասիական ծովափի կառավարիչ, որի՝ որպէս գլխաւոր հրամանատարի վրայ էին դրուած ապստամբների դէմ պատերազմելու պարտականութիւնները[11]: Տիսսափեռնէսը ծովափնեայ շրջանի ստրատեգոսն էր[12], այսինքն՝ այն տարածքների, որոնք կառավարում էր Կիւրոս Կրտսերը[13], Փառնաբազոսը եւս եղել է ծովին սահմանակից շրջանների հրամանատարը[14]: Թեմիստոկլէսի նամակներից մէկում յիշատակւում է «ծովի մօտ ապրող (ծովափնեայ) ժողովուրդների թագաւորի սատրապ» (σατράπῃ βασιλέως ἐπί τοῖς πρὸς θαλάσσῃ ἔθνεσιν) Արտաբազոսը[15], այսինքն՝ պարսից արքան նկատի է առնուած որպէս «ծովափնեայ ժողովուրդների» գերագոյն տիրակալ: Դատելով այլ աղբիւրներից՝ Արտաբազոսը Դասկիլէայի սատրապն էր[16]:

Համաձայն Արիանոսի՝ Դարեհ Գ.ը Մեմնոնին նշանակել էր Ստորին Ասիայի[17] կամ ողջ ծովափնեայ շրջանի կառավարիչ եւ ամբողջ նաւատորմի հրամանատար[18]:

Մէջբերուած տեղեկութիւններում հիմնականում տեսնում ենք, որ գործ ունենք առափնեայ զօրքերի ստրատեգոսի հետ, եւ բնական է, որ առանձին դէպքերում ստրատեգոսը համադրելու էր իր ռազմական գործունէութիւնը վարչական պարտականութիւնների հետ՝ դառնալով նաեւ առափնեայ ժողովուրդների կառավարիչ կամ սատրապ (Հերոդոտոս, V, 30; Դիոդորոս Սիկիլիացի, XIV, 19, 25; 26, 80; XVI, 52, 5; Պլուտարքոս, Արտաքսերքսէս, II, 3; Արիանոս, I, 20, 3; II, 1, 1): Առանձին դէպքերում, օրինակ՝ Կիւրոս Կրտսերի պարագայում, հէնց վարչական բարձր դիրքն էր պայմանաւորում նաեւ ռազմական պաշտօնի համադրումը: Ամէն դէպքում, ուշադրութիւն դարձնենք մի իրողութեան վրայ. առափնեայ զօրքերի ստրատեգոսը ռազմական պաշտօն էր, այսինքն՝ սատրապի կողքին մշտապէս կար ռազմական պաշտօնեայ, որը սահմանափակելու էր սատրապի իշխանութիւնը: Հետեւաբար, Փոքր Ասիայում մշտապէս տեղի ունեցող պատերազմների պայմաններում ռազմական առաջնորդը դառնում էր նաեւ սատրապ, կամ էլ սատրապն էր օժտւում ռազմական լիազորութիւններով: Անտիկ հեղինակների տեղեկութիւնների գերակշիռ մասը ցոյց է տալիս, որ Փոքր Ասիայի առափնեայ զօրքերն ունեցել են հրամանատար, ընդ որում՝ առափնեայ զօրքերը տարածական առումով պէտք է ընդգրկէին լայն աշխարհագրութիւն, հետեւաբար՝ ստրատեգոսի ենթակայութեան տակ էր Աքեմենեան տէրութեան՝ Փոքր Ասիայի արեւմտեան եւ հարաւային առափնեայ շրջաններում կենտրոնացած

10 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVI, 50, 30, p. 55

11 Նոյն տեղում, XVI, 52, 5, էջ 57:

12 **Thucydides**, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, Vol. IV, Books VII-VIII, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library, VIII, 5, 4, p. 198.

13 **Ксенофонт**, **Анабасис**,- Греческая история, III, 1, 3, с. 304. տե՛ս նաեւ **H. B. Shourkaei**, *La satrapie de Phrygie hellespontique (Daskyleion): des origines à la chute de l'Empire perse achéménide*, DABIR (The Digital Archive of Brief Notes & Iran Review), 2018, 5, p. 10.

14 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars II, XIII, 36, 25, p. 722.

15 Themistoclis Epistolae, XVI, p. 755, in: Epistolographi Graeci, ed. R. Hercher, Parisiis, 1873.

16 **Thucydides**, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, Vol. I, Books I-II, London, Cambridge, Massachusetts, 1956, Loeb Classical Library, I, 129, p. 216.

17 Հերոդոտոսը նոյնպէս Ասիան բաժանում էր երկու մասի՝ Վերին եւ Ստորին Ասիայի՝ առանձնացնելով Հալիւս գետով (տե՛ս Հերոդոտոս, *Պատմութիւն-ին գրքից*, թարգմանութիւնը Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1986, I, 72; 95, 103; 105; 177; IV, 1), այսինքն՝ Ստորին Ասիան ընկնում էր Հալիւսից արեւմուտք եւ հարաւ-արեւմուտք:

18 **Arrian**, *Anabasis Alexandri*, with an English translation by E. Iliff Robson, Vol. I, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, I, 20, 3; II, 1, 1, pp. 86, 124.

զօրքերի եւ նաւատորմի հրամանատարութիւնը: Անկասկած, ռազմական նման տիտղոսի առաջացումը կապուած էր յոյների հետ անընդմէջ պատերազմներով: Հետեւաբար՝ Փոքր Ասիայում տեղի ունեցող իրադարձութիւններին քաջատեղեակ Հերոդոտոսը, ով նաեւ ժամանակագրական առումով պատմիչներից առաջինն է իր վերը մէջբերուած տեղեկութեամբ (V, 25), միանշանակ խօսում է սատրապից տարբեր պարսից ռազմական բարձրաստիճան պաշտօնեայի մասին, որը հին հեղինակների մօտ հիմնականում յայտնի էր «առափնեայ զօրքերի ստրատեգոս» տիտղոսով:

Բարձրաստիճան ռազմական պաշտօնեան կարանոսն էր, որի մասին յիշատակում է Քսենոփոնը: Վերջինս յայտնում է, որ Կիւրոս Կրտսերին պարսից արքան յանձնում է ամբողջ առափնեայ ժողովուրդների/շրջան(ներ)ի իշխանութիւնը եւ նշանակում Կաստոլոսի (Լիւդիայի կենտրոնական մասում) դաշտում հաւաքուող (իմա՛ զօրահանդէսի) զօրքերի կարանոս[19]: Յոյն պատմիչը նոյն տեղեկութիւնը կրկնում է նաեւ «Անաբասիսում», այն տարբերութեամբ, որ Կիւրոս Կրտսերին յիշատակում է որպէս ստրատեգոս եւ Լիւդիայի, Մեծ Փռիւգիայի ու Կապադովկիայի սատրապ[20]: Քսենոփոնի տեղեկութիւններից կարող ենք ենթադրել, որ ե՛ւ կարանոսը[21], ե՛ւ ստրատեգոսը հաւասարազօր ռազմական պաշտօններ են: Ընդ որում՝ Կիւրոս Կրտսերի ձեռքում մի քանի սատրապութեան եւ ռազմական կառավարման կենտրոնացումը, թերեւս, խօսում է, այսպէս ասած, աւելի ընդարձակ ռազմավարչական միաւորների՝ տոպարքիաների գոյութեան մասին, որոնց քանակը Աքեմենեան տէրութիւնում տարբեր ժամանակներում չորսից եօթն էր[22]: Հետեւաբար, Կիւրոս Կրտսերի ձեռքում էր կենտրոնացած տէրութեան արեւմտեան կողմի, ուշ շրջանի սասանեան տերմինաբանութեամբ՝ քուստի պաշտպանութիւնը, իսկ կարանոսն էլ որոշակիօրէն կարող է համեմատուել սասանեան պադգոսպանի հետ: Աքեմենեան կառավարման համակարգին քաջատեղեակ Քսենոփոնի մէկ այլ աշխատութիւնից տեղեկանում ենք, որ Կիւրոս Կրտսերից առաջ ռազմական եւ վարչական իշխանութիւնները յստակ տարանջատուած են եղել[23]: Ընդհանրապէս, հարկ է ուշադրութիւն դարձնել այն հանգամանքին, որ Կիւրոս Կրտսերի «Կաստոլոսի դաշտում հաւաքուող զօրքերի կարանոս» տիտղոսը շատ աւելի խորն իմաստ ունէր: Աքեմենեան արքայազնի իշ-

19 **Xenophon**, *Hellenica*, Books I-V, with an English translation by C. L. Brownson, Cambridge-Massachusetts-London, 1961, Loeb Classical Library, I, IV, 3, pp. 32, 34; **Ксенофонт**, *Анабасис*,- Греческая история, I, 4, 3, с. 257. Աւելի ուշ գլխաւոր հրամանատարը Տիսսափեռնէսն էր (տե՛ս **Xenophon**, *Hellenica*, III, 2, 13, p. 202):

20 **Xenophon**, *Anabasis*, Vol. III, Books I-VII, Loeb Classical Library, I, I, 2; IX, 7, pp. 2, 82.

21 «Կարանոս» բառի ծագման, ստուգաբանութիւնների եւ նշանակութիւնների մասին մանրամասն տե՛ս **E. Rung**, *Some Notes on Karanos in the Achaemenid Empire*, Iranica Antiqua, Vol. 50, 2015, pp. 334-340; **Э. В. Рунг**, *Κάρανος/Kārana в военно-административной системе Ахеменидской империи*, Иран и античный мир: Политическое, культурное и экономическое взаимодействие двух цивилизаций, Тезисы докладов международной научной конференции (Казань, 14-16 сентября 2011 г.), Казань, 2011, с. 18-19.

22 Հերոդոտոս, VII, 82; **Xenophon**, *Anabasis*, I, VII, 11-12, pp. 64, 66. Այս մասին մանրամասն տե՛ս **E. Rung**, *Some Notes on Karanos in the Achaemenid Empire*, pp. 348-350; **И. В. Пьянков**, *«История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э.*,- Вестник древней истории, 1965, 2, с. 48. Քսենոփոնի նշած չորս զօրավարներից մէկի՝ Տիսսափեռնէսի յիշատակութիւնն իրականացիօրէն խօսում է այն մասին, որ պարսից արքան, այլեւս չճանաչելով Կիւրոս Կրտսերի ռազմավարչական լիազօրութիւնները, վերջինիս փոխարինել էր իրեն հաւատարիմ Տիսսափեռնէսով, այսինքն՝ Փոքր Ասիան համարուել է առանձին ռազմական շրջան:

23 **Xenophon**, *Memorabilia. Oeconomicus. Symposium. Apologia*, translated by E. C. Marchant, O. J. Todd, Cambridge-Massachusetts-London, 1997, Loeb Classical Library, Oec., IV, 10-13; 16, pp. 394, 396.

© National Library of Armenia

հրամանատար[10]: Մենտորը մէկ այլ տեղեկութիւնում յիշատակւում է ասիական ծովափի կառավարիչ, որի՝ որպէս գլխաւոր հրամանատարի վրայ էին դրուած ապստամբների դէմ պատերազմելու պարտականութիւնները[11]: Տիսսափեռնէսը ծովափնեայ շրջանի ստրատեգոսն էր[12], այսինքն՝ այն տարածքների, որոնք կառավարում էր Կիւրոս Կրտսերը[13], Փառնաբազոսը եւս եղել է ծովին սահմանակից շրջանների հրամանատարը[14]: Թեմիստոկլէսի նամակներից մէկում յիշատակւում է «ծովի մօտ ապրող (ծովափնեայ) ժողովուրդների թագաւորի սատրապ» (σατράπῃ βασιλέως ἐπί τοῖς πρὸς θαλάσσῃ ἔθνεσιν) Արտաբազոսը[15], այսինքն՝ պարսից արքան նկատի է առնուած որպէս «ծովափնեայ ժողովուրդների» գերագոյն տիրակալ: Դատելով այլ աղբիւրներից՝ Արտաբազոսը Դասկիլէայի սատրապն էր[16]:

Համաձայն Արիանոսի՝ Դարեհ Գ.ը Մեմնոնին նշանակել էր Ստորին Ասիայի[17] կամ ողջ ծովափնեայ շրջանի կառավարիչ եւ ամբողջ նաւատորմի հրամանատար[18]:

Մէջբերուած տեղեկութիւններում հիմնականում տեսնում ենք, որ գործ ունենք առափնեայ զօրքերի ստրատեգոսի հետ, եւ բնական է, որ առանձին դէպքերում ստրատեգոսը համադրելու էր իր ռազմական գործունէութիւնը վարչական պարտականութիւնների հետ՝ դառնալով նաեւ առափնեայ ժողովուրդների կառավարիչ կամ սատրապ (Հերոդոտոս, V, 30; Դիոդորոս Սիկիլիացի, XIV, 19, 25; 26, 80; XVI, 52, 5; Պլուտարքոս, Արտաքսերքսէս, II, 3; Արիանոս, I, 20, 3; II, 1, 1): Առանձին դէպքերում, օրինակ՝ Կիւրոս Կրտսերի պարագայում, հէնց վարչական բարձր դիրքն էր պայմանաւորում նաեւ ռազմական պաշտօնի համադրումը: Ամէն դէպքում, ուշադրութիւն դարձնենք մի իրողութեան վրայ. առափնեայ զօրքերի ստրատեգոսը ռազմական պաշտօն էր, այսինքն՝ սատրապի կողքին մշտապէս կար ռազմական պաշտօնեայ, որը սահմանափակելու էր սատրապի իշխանութիւնը: Հետեւաբար, Փոքր Ասիայում մշտապէս տեղի ունեցող պատերազմների պայմաններում ռազմական առաջնորդը դառնում էր նաեւ սատրապ, կամ էլ սատրապն էր օժտւում ռազմական լիազորութիւններով: Անտիկ հեղինակների տեղեկութիւնների դերակշիռ մասը ցոյց է տալիս, որ Փոքր Ասիայի առափնեայ զօրքերն ունեցել են հրամանատար, ընդ որում՝ առափնեայ զօրքերը տարածական առումով պէտք է ընդգրկէին լայն աշխարհագրութիւն, հետեւաբար՝ ստրատեգոսի ենթակայութեան տակ էր Աքեմենեան տէրութեան՝ Փոքր Ասիայի արեւմտեան եւ հարաւային առափնեայ շրջաններում կենտրոնացած

10 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVI, 50, 30, p. 55

11 Նոյն տեղում, XVI, 52, 5, էջ 57:

12 **Thucydides**, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, Vol. IV, Books VII-VIII, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library, VIII, 5, 4, p. 198.

13 **Ксенофонт**, **Анабасис**,- Греческая история, III, 1, 3, с. 304. տե՛ս նաեւ **H. B. Shourkaei**, *La satrapie de Phrygie hellespontique (Daskyleion): des origines à la chute de l'Empire perse achéménide*, DABIR (The Digital Archive of Brief Notes & Iran Review), 2018, 5, p. 10.

14 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars II, XIII, 36, 25, p. 722.

15 Themistoclis Epistolae, XVI, p. 755, in: Epistolographi Graeci, ed. R. Hercher, Parisiis, 1873.

16 **Thucydides**, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, Vol. I, Books I-II, London, Cambridge, Massachusetts, 1956, Loeb Classical Library, I, 129, p. 216.

17 Հերոդոտոսը նոյնպէս Ասիան բաժանում էր երկու մասի՝ Վերին եւ Ստորին Ասիայի՝ առանձնացնելով Հալիւս գետով (տե՛ս Հերոդոտոս, *Պատմութիւն հնը գրքից*, թարգմանութիւնը Ս. Կրկեասարեանի, Երեւան, 1986, I, 72; 95, 103; 105; 177; IV, 1), այսինքն՝ Ստորին Ասիան ընկնում էր Հալիւսից արեւմուտք եւ հարաւ-արեւմուտք:

18 **Arrian**, *Anabasis Alexandri*, with an English translation by E. Iliff Robson, Vol. I, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, I, 20, 3; II, 1, 1, pp. 86, 124.

զօրքերի եւ նաւատորմի հրամանատարութիւնը: Անկասկած, ռազմական նման տիտղոսի առաջացումը կապուած էր յոյների հետ անընդմէջ պատերազմներով: Հետեւաբար՝ Փոքր Ասիայում տեղի ունեցող իրադարձութիւններին քաջատեղեակ Հերոդոտոսը, ով նաեւ ժամանակագրական առումով պատմիչներից առաջինն է իր վերը մէջբերուած տեղեկութեամբ (V, 25), միանշանակ խօսում է սատրապից տարբեր պարսից ռազմական բարձրաստիճան պաշտօնեայի մասին, որը հին հեղինակների մօտ հիմնականում յայտնի էր «առափնեայ զօրքերի ստրատեգոս» տիտղոսով:

Բարձրաստիճան ռազմական պաշտօնեան կարանոսն էր, որի մասին յիշատակում է Քսենոփոնը: Վերջինս յայտնում է, որ Կիւրոս Կրտսերին պարսից արքան յանձնում է ամբողջ առափնեայ ժողովուրդների/շրջան(ներ)ի իշխանութիւնը եւ նշանակում Կաստոլոսի (Լիւդիայի կենտրոնական մասում) դաշտում հաւաքուող (իմա՛ զօրահանդէսի) զօրքերի կարանոս[19]: Յոյն պատմիչը նոյն տեղեկութիւնը կրկնում է նաեւ «Անաբասիսում», այն տարբերութեամբ, որ Կիւրոս Կրտսերին յիշատակում է որպէս ստրատեգոս եւ Լիւդիայի, Մեծ Փռիւգիայի ու Կապադովկիայի սատրապ[20]: Քսենոփոնի տեղեկութիւններից կարող ենք ենթադրել, որ ե՛ւ կարանոսը[21], ե՛ւ ստրատեգոսը հաւասարազօր ռազմական պաշտօններ են: Ընդ որում Կիւրոս Կրտսերի ձեռքում մի քանի սատրապութեան եւ ռազմական կառավարման կենտրոնացումը, թերեւս, խօսում է, այսպէս ասած, աւելի ընդարձակ ռազմավարչական միաւորների՝ տոպարքիաների գոյութեան մասին, որոնց քանակը Աքեմենեան տէրութիւնում տարբեր ժամանակներում չորսից եօթն էր[22]: Հետեւաբար, Կիւրոս Կրտսերի ձեռքում էր կենտրոնացած տէրութեան արեւմտեան կողմի, ուշ շրջանի սասանեան տերմինաբանութեամբ՝ քուստի պաշտպանութիւնը, իսկ կարանոսն էլ որոշակիօրէն կարող է համեմատուել սասանեան պադգոսպանի հետ: Աքեմենեան կառավարման համակարգին քաջատեղեակ Քսենոփոնի մէկ այլ աշխատութիւնից տեղեկանում ենք, որ Կիւրոս Կրտսերից առաջ ռազմական եւ վարչական իշխանութիւնները յստակ տարանջատուած են եղել[23]: Ընդհանրապէս, հարկ է ուշադրութիւն դարձնել այն հանգամանքին, որ Կիւրոս Կրտսերի «Կաստոլոսի դաշտում հաւաքուող զօրքերի կարանոս» տիտղոսը շատ աւելի խորն իմաստ ունէր: Աքեմենեան արքայազնի իշ-

19 **Xenophon**, *Hellenica*, Books I-V, with an English translation by C. L. Brownson, Cambridge-Massachusetts-London, 1961, Loeb Classical Library, I, IV, 3, pp. 32, 34; **Ксенофонт**, *Анабасис*,- Греческая история, I, 4, 3, с. 257. Աւելի ուշ գլխաւոր հրամանատարը Տիսսափեռնէսն էր (տե՛ս **Xenophon**, *Hellenica*, III, 2, 13, p. 202):

20 **Xenophon**, *Anabasis*, Vol. III, Books I-VII, Loeb Classical Library, I, I, 2; IX, 7, pp. 2, 82.

21 «Կարանոս» բառի ծագման, ստուգաբանութիւնների եւ նշանակութիւնների մասին մանրամասն տե՛ս **E. Rung**, *Some Notes on Karanos in the Achaemenid Empire*, Iranica Antiqua, Vol. 50, 2015, pp. 334-340; **Э. В. Рунг**, *Κάρανος/Kārana в военно-административной системе Ахеменидской империи*, Иран и античный мир: Политическое, культурное и экономическое взаимодействие двух цивилизаций, Тезисы докладов международной научной конференции (Казань, 14-16 сентября 2011 г.), Казань, 2011, с. 18-19.

22 Հերոդոտոս, VII, 82; **Xenophon**, *Anabasis*, I, VII, 11-12, pp. 64, 66. Այս մասին մանրամասն տե՛ս **E. Rung**, *Some Notes on Karanos in the Achaemenid Empire*, pp. 348-350; **И. В. Пьянков**, *«История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э.*,- Вестник древней истории, 1965, 2, с. 48. Քսենոփոնի նշած չորս զօրավարներից մէկի՝ Տիսսափեռնէսի յիշատակութիւնն իրաւացիօրէն խօսում է այն մասին, որ պարսից արքան, այլեւս չճանաչելով Կիւրոս Կրտսերի ռազմավարչական լիազորութիւնները, վերջինիս փոխարինել էր իրեն հաւատարիմ Տիսսափեռնէսով, այսինքն՝ Փոքր Ասիան համարուել է առանձին ռազմական շրջան:

23 **Xenophon**, *Memorabilia. Oeconomicus. Symposium. Apologia*, translated by E. C. Marchant, O. J. Todd, Cambridge-Massachusetts-London, 1997, Loeb Classical Library, Oec., IV, 10-13; 16, pp. 394, 396.

© National Library of Armenia

խանութեան տակ գտնուող զօրքերի հաւաքումը Կաստոլոսի դաշտում սոսկ ռազմական ստուգատես չէր, այլեւ սատրապական իշխանութիւնը կարանոսի ռազմավարչական լիազօրութիւններով իր հաւատարմութիւնն էր արտայայտում մեծ արքային՝ հաւաքելով վարչական միաւորի տարածքից գանձուող հարկերը, գումարելով դատական նիստեր: Համանման իրողութիւնները տարածուած էին տարբեր ժամանակներում տարբեր ժողովուրդների մօտ. օրինակ, հին հռոմէական «մարսեան դաշտերը» կամ Ֆրանկների «մարտեան դաշտերը»:

Կեղծ-Արիստոտելի մի հետաքրքիր տեղեկութիւնից պարզւում է, որ «Ասիայի ամբողջ կայսրութիւնը (իմա՛ պարսից տէրութիւնը - Յ. Խ.)՝ արեւմուտքում սահման ունենալով Հելլեսպոնտոսը, արեւելքում Ինդոսը, ըստ ցեղերի բաժանուած էր Մեծ արքայի զօրավարների, սատրապների եւ հպատակ-արքայորդիների միջեւ»[24]: Փաստօրէն, տեղեկութիւնից ակնյայտ է, որ պարսից տէրութեան կառավարումն իրականացւում էր զօրավարների՝ կարանոս-ստրատեգոսների, սատրապների եւ արքայազների միջոցով, ընդ որում՝ արքայազնների վերջում յիշատակուելը ցոյց է տալիս, որ նրանք համադրել են ռազմավարչական՝ ստրատեգոսի եւ սատրապի իշխանութիւնը:

Նշենք նաեւ, որ մեր կարծիքով, հին պարսկական սեպագիր արձանագրութիւններում յիշատակուող «Նրանք (այն երկրները - Յ. Խ.), որոնք ծովի մօտ են» (tyaiy drayahyā) աշխարհագրական բառակապակցութիւնը առաւել կամ պակաս տարածքային ընդգրկումով կարելի է նոյնացնել առափնեայ զօրքերի/ժողովուրդների/շրջանների զօրավարի ղեկավարած տարածքի, այսինքն՝ Փոքր Ասիայի հարաւային ծովափնեայ շրջանների հետ: Առափնեայ զօրքերի/ժողովուրդների/շրջանների զօրավարի գլխաւոր առաքելութիւնը, ըստ երեւոյթին, նաեւ նաւատորմի ընդհանուր հրամանատարութիւնն էր, հետեւաբար՝ առափնեայ բառի ընդգծումը հէնց այդ իմաստով պէտք է ընդունենք, յատկապէս որ նաւատորմի կառավարումն անմիջականօրէն դրուած էր Աքեմենեան արքայորդիների վրայ[25]: Աշխարհագրական առումով առափնեայ զօրքերը/ժողովուրդները/շրջանները համապատասխանում են Հերոդոտոսի յիշատակած առափնեայ Ասիային[26] Փոքր Ասիայի արեւմտեան եւ հարաւային ծովամերձ երկրներին՝ Յոնիային, Կարիային, Լիւկիային, Կիլիկիային:

Մեր քննութեան համար հետաքրքրութիւն է ներկայացնում Կտեսիասի տեղեկութիւնը Կիւրոս Մեծի կրտսեր որդու՝ Բարդիա-Տանաոքսարէսի մասին, որի տիրոյթներն է համարում Բակտրիան, Խորեզմը, Պարթեւքը, Կարմանիան[27]: Ամենայն հաւանականութեամբ, իր բովանդակութեամբ կարանոսին համարժէք է Տանաոքսարէսի δεσπότης (տէր, տիրակալ, առաջնորդ) բնորոշումը, ի տարբերութիւն, կողքին յիշատակուող Սպիտակէս եւ Մեգաբերնէս սատրապների[28]:

Վերջում անդրադառնանք նաեւ մի հարցի: Կարանոսի հիմքում ընկած է հին պարսկերէն kāra (զօրք-ժողովուրդ, աշխարհազօր, ժողովուրդ) բառը[29]: Եթէ հին պարսկերէն spāda բառը կապուած էր կանոնաւոր, մշտական բանակի հետ, ապա kāra բառն ունէր «զօրք-ժողովուրդ, աշխարհազօր, ժողովուրդ» նշանակութիւնը[30]:

Աքեմենեանների ժամանակ աշխարհազօրը հաւաքւում էր իրանական ժողովուրդներից, յատկապէս՝ պարսիկներից: Այս տեսանկիւնից, ի հարկէ, Փոքր Ասիայի կարանոսի ենթակայութեան տակ միայն իրանական ժողովուրդներ, առաւել եւս՝ միայն պարսիկներ չէին կարող լինել[31]: Հարկաւ, կարանոսի ռազմական ուժերի կորիզը պէտք է պարսիկներից կազմուած լինէր, իսկ ընդհանուր առմամբ նրա ենթակայութեան տակ բազմազգ բանակ էր՝ կազմուած ինչպէս Փոքր Ասիայից, այնպէս էլ տէրութեան այլ հատուածներից հաւաքագրուած զինուորներից:

24 De Mundo, ed. by E. S. Forster, Oxford, 1914, 398a.

25 Հերոդոտոս, VII, 97:

26 Նոյն տեղում, I, 177; VI, 43:

27 *Ctesias' History of Persia: Tales of the Orient*, by L. Llewellyn-Jones and J. Robson, London-New York, 2010, p. 173.

28 Նոյն տեղում (հմմտ.՝ **И. В. Пьянков**, *Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана*,- ВДИ, 1961, 4, с. 102):

29 **E. Rung**, *Some Notes on* Karanos *in the Achaemenid Empire*, p. 336; **Э. Хуршудян**, *Государственные институты парфянского и сасанидского Ирана*, Алматы, 2015, с. 198. Հաւանական է, որ «կարանոս» բառի հիմքում ընկած է սանսկրիտերէն *nay* (տանել, առաջնորդել) բայը և՝ կարանոս նշանակել է *kāra-naya* (զօրքի առաջնորդ, զօրահրամանատար): Տե՛ս **Э. В. Рунг**, *Тиссаферн и Гидарниды в контексте политической истории Ахеменидской державы в V в. до н. э.*, ВДИ, 2012, 1, с. 20:

30 **Э. Хуршудян**, *Государственные институты парфянского и сасанидского Ирана*, с. 198; **R. Frye**, *The History of Ancient Iran*, München, 1983, p. 119.

31 **Քսենոփոն**, *Կիւրոպեդիա*, թարգմ.՝ Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 2000, էջ 356:

© National Library of Armenia